ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
МИНИСТЕРСТВО ТРАНСПОРТА И СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATION OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
28 Nalbandyan Street, Yerevan 0010, Republic of Armenia
Республика Армения, Ереван 0010, ул. Налбандяна 28
Հեռ./Tel.: (37410) 526652, Ֆաքս/Fax: (37410) 560528
Էլ.փոստ/E-mail: mintranscom@mtc.am

N 03/17.1/2461-12

«20» 03 2012թ.

"Ինֆորմացիայի ազատության կենտրոն"
հասարակական կազմակերպության
հանրային կապերի պատասխանատու
տկն Ա.ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Քոչարյան

Ի պատասխան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին հասցեագրված Ձեր 2012 թվականի մարտի 12-ի թիվ 162-ի 5 գրության հայտնում եմ, որ "Վարչական իրավախախտումների վերաբերյալ" ՀՀ օրենսգրքի 135.1 հոդվածի համաձայն հասարակական՝ ավտոմոբիլային, օդային, ջրային, էլեկտրական և երկաթուղային տրանսպորտում ծխելը, բացառությամբ ջրային և երկաթուղային տրանսպորտում ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Նույն խախտման կատարումն այն անձի կողմից, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել երեք ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: Նույն օրենսգրքի 224 հոդվածի համաձայն վերը նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն ճանապարհային ոստիկանության բաժնի (բաժանմունքի) պետը, պետի տեղակալը, ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները:

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ ՀՀ տրանսպորտային տեսչության պետ
Ա.Սողոմոնյան 59-01-44